ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/96

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Շինարար-97» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Ահարոնյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական՝ թիվ 29.110.00948),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.04.2021թ. թիվ 26/26-1/5686-2021 գրությամբ «Շինարար-97» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 13.04.2021թ. թիվ 08.1//7041-2021 գրության հիման վրա 15.04.2021թ. թիվ 26/26-1/5686-2021 գրությամբ նախաձեռնել է «Շինարար-97» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Շինարար-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Շինարար-97» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.04.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն չենք ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2021թ-ի թիվ 26/26-1/5686-2021 գրությամբ նախաձեռնված «Շինարար-97» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի հետ, քանի որ բազմիցս բանավոր և գրավոր ներկայացրել ենք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Պատվիրատուին, որ ՀՀ կառավարության 27.09.20թ-ի 1586-ն որոշման համաձայն հանրապետությունում հայտարարվել է ռազմական դրություն, և այն հանքերը, որտեղից հնարավոր էր ձեռքբերել աշխատանքների կատարման համար նախատեսված բաց վարդագույն գույնի բազալտե մեծաչափ քարը /Տաշիր, Ծաթեր՝ Լոռու մարզ, Կառնուտ՝ Շիրակի մարզ հանքեր/ չեն կարողացել տրամադրել այն, պատճառաբանելով, որ պատերազմական իրավիճակից հանքերը չեն գործել, ծանր տեխնիկան /տրակտորներ, կռունկներ և այլն/ իջեցվել են հաքերից, իսկ բեռնատար ավտոմեքենաները տրամադրվել են զինկոմիսարիատներին:

Այդ իսկ պատճառերով հնարավոր չի եղել կատարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Շինարար-97» ՍՊԸ-ի միջև 09.09.2020թ.-ին կնքված, N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163 պայմանագրով սահմանված ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի (Քոբեր ե/գ կայարան) Քոբայրավանք համալիրի Գլխավոր Եկեղեցուն կից Մատուռի տանիքաածածկի նորոգման աշխատանքները:

Բացի այդ Պայմանագրի 7-րդ բաժնով սահմանված է եղել նաև, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի

ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը»:

«Շինարար-97» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/96 ընթացակարգի շրջանակներում 23.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.04.2021թ. թիվ 08.1//7041-2021-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Շինարար-97» ՍՊԸ-ի միջև կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 09.09.2020թ կնքվել է թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր),որի համաձայն աշխատանքները պետք է ավարտվեին 2020 թվականի դեկտեմբերի 1-ին, ինչը չի իրականացվել: Դրանք չեն իրականացվել նաև տրամադրված լրացուցիչ ողջամիտ ժամկետներում:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը միակողմանի լուծել է «Շինարար-97» ՍՊԸ-ի հետ 09.09.2020թ կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163 գնման պայմանագիրը, ինչի մասին ծանուցումը 07.04.2021թ հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում: Պայմանագիրն միակողմանի լուծելու մասին ծանուցումը ուղարկվել է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ներկայացնում եմ «Շինարար-97» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները և համապատասխան հիմքերը /կցվում է/՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/96 ընթացակարգի շրջանակներում 23.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/96 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/96 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Շինարար-97» ՍՊԸ-ի միջև 09.09.2020թ. կնքվել է N «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163» ծածկագրով պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Կապալառուն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված վերականգնողական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2. Պայմանագրով նախատեսված աշխատանքները պետք է կատարվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3. Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում՝ մինչև 2020թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ուղղված 10.11.2020թ. գրությամբ «Շինարար-97» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«Համաձայն 09.09.2020թ. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Շինարար-97» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163» ծածկագրով պայմանագրի վերջինս կատարելու էր ՀՀ Լոռու մարզի Թումանյան

համայնքի (Քոբեր ե/գ կայարան) Քոբայրավանք համալիրի Գլխավոր եկեղեցուն կից Մատուռի տանիքաձածկի նորոգման աշխատանքները: Նախահաշվով աշխատանքների կատարման համար նախատեսված կարմրավուն քարը հնարավոր չէ ձեռք բերել:

Քարի համար դիմել ենք Տաշիրի, Ծաթերի, Կառնուտի հանքեր, բայց ելնելով պատերազմական իրավիճակից հանքերը չեն գործում տեխնիկա և բեռնատար ավտոմեքենաներ չունենալու պատճառով:

Այդ իսկ պատճառով լուծել պայմանագիրը կամ վերանայել ժամկետները»:

3. «Շինարար-97» ՍՊԸ-ին ուղղված 25.12.2021թ. թիվ 081/14.2/31793-2020 գրությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Ձեր միջև 09.09.2020թ. կնքված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163» ծածկագրով պայմանագրով ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի (Քոբեր ե/գ կայարան) Քոբայրավանք համալիրի գլխավոր եկեղեցուն կից մատուռի (տանիքի) նորոգման աշխատատանքների կատարման ժամկետը սահմանված է մինչև ս.թ. դեկտեմբերի 1-ը:

Խնդրում ենք տալ պարզաբանում Ձեր կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունները չկատարելու վերաբերյալ»:

4. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ուղղված 08.01.2021թ. գրությամբ «Շինարար-97» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից 28.12.2020թ. ուղարկված թիվ 08.1/14.2/3/793-20 գրության հայտնում եք Ձեզ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Շինարար-97» ՍՊԸ-ի միջև 09.09.2020թ.-ին կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163 պայմանագրի համաձայն վերջինս կատարելու էր ՀՀ Լոռու մարզի Թումանյան համաքի (Քոբեր ե/գ կայարան) Քոբայրավանք համալիրի Գլխավոր Եկեղեցուն կից Մատուռի տանիքաձածկի նորոգման աշխատանքները:

ՀՀ կառավարության 27.09.2020թ 1586-ն որոշման համաձայն հանրապետությունում հայտարարվել է ռազմական դրություն:

Այն հանքերը, որտեղից հնարավոր էր ձեռքբերել աշխատանքների կատարման համար նախատեսված քարը /Տաշիր, Ծաթեր, Կառնուտ բնակավայրերի հանքեր/ հրաժարվել են տրամադրել այն, քանի որ ելնելով պատերազմական իրավիճակից հանքերը չեն գործել /որի մասին 2020թ-ի նոյեմբերի 10-ին տեղեկացրել ենք Ձեզ:

Կից ներկայացնում ենք ուղարկված գրության պատճեն/:

Տեխնիկան /տրակտորներ, կռունկներ և այլն/ իջեցվել հանքերից, տրամադրվել են զինկոմիսարիատներին: Բացի այդ աշխ. ղեկ Ժորա Ղազարյանը 27.09.2020թ-ին հայտարարված զորահավաքի շրջանակներում զորահավաքային զորակոչի միջոցով զորակոչվել է զինվորական ծառայության:

Խնդրում ենք հաշվի առնելով վերը նշվածը և Պայմանագրի 7-րդ բաժնի պայմանները լուծել պայմանագիրը /Պայմանագրով պարտավորություններն ամբողջությանբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը/»:

5. «Շինարար-97» ՍՊԸ-ին ուղղված 07.04.2021թ. թիվ 08.1/6831 ծանուցմամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Շինարար-97» ՍՊԸ-ի միջև վերականգնողական աշխատանքների ձեռքբերման նպատակով 09.09.2020թ. կնքված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163» գնման պայմանագրի համաձայն աշխատանքները պետք է ավարտվեին 2020 թվականի դեկտեմբերի 1-ին, ինչը չի իրականացվել: Դրանք չեն իրականացվել նաև տրամադրված լրացուցիչ ողջամիտ ժամկետներում:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը միակողմանի լուծում է Ձեզ հետ 09.09.2020թ. կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163» գնման պայմանագիրը»:

6.Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 07.04.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2021թ. թիվ 26/26-1/5686-2021 գրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 13.04.2021թ. թիվ 08.1//7041-2021 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Շինարար-97» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար ***պատասխանատու է մեղքի առկայության դեպքում***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս ***պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: (…)

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Շինարար- 97» ՍՊԸ-ի միջև 09.09.2020թ. կնքվել է N «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163» ծածկագրով պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Կապալառուն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված վերականգնողական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2. Պայմանագրով նախատեսված աշխատանքները պետք է կատարվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և

կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3. Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում՝ մինչև 2020թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ուղղված 10.11.2020թ. գրությամբ «Շինարար-97» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«Համաձայն 09.09.2020թ. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Շինարար-97» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163» ծածկագրով պայմանագրի վերջինս կատարելու էր ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի (Քոբեր ե/գ կայարան) Քոբայրավանք համալիրի Գլխավոր եկեղեցուն կից Մատուռի տանիքաածածկի նորոգման աշխատանքները: Նախահաշվով աշխատանքների կատարման համար նախատեսված կարմրավուն քարը հնարավոր չէ ձեռք բերել:

Քարի համար դիմել ենք Տաշիրի, Ծաթերի, Կառնուտի հանքեր, բայց ելնելով ***<u>պատերազմական իրավիճակից հանքերը չեն գործում տեխնիկա և բեռնատար ավտոմեքենաներ չունենալու պատճառով:</u>***

<u>Այդ իսկ պատճառով լուծել պայմանագիրը կամ վերանայել ժամկետները</u>»:

«Շինարար-97» ՍՊԸ-ին ուղղված 25.12.2021թ. թիվ 081/14.2/31793-2020 գրությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Ձեր միջև 09.09.2020թ. կնքված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163» ծածկագրով պայմանագրով ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի (Քոբեր ե/գ կայարան) Քոբայրավանք համալիրի գլխավոր եկեղեցուն կից մատուռի (տանիքի) նորոգման աշխատատանքների կատարման ժամկետը սահմանված է մինչև ս.թ. դեկտեմբերի 1-ը:

Խնդրում ենք տալ պարզաբանում Ձեր կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունները չկատարելու վերաբերյալ»:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ուղղված 08.01.2021թ. գրությամբ «Շինարար-97» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից 28.12.2020թ. ուղարկված թիվ 08.1/14.2/3/793-20 գրության հայտնում եք Ձեզ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Շինարար-97» ՍՊԸ-ի միջև 09.09.2020թ.-ին կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163 պայմանագրի համաձայն վերջինս կատարելու էր ՀՀ Լոռու մարզի Թումանյան համաքի (Քոբեր ե/գ կայարան) Քոբայրավանք համալիրի Գլխավոր Եկեղեցուն կից Մատուռի տանիքաձածկի նորոգման աշխատանքները:

ՀՀ կառավարության 27.09.2020թ 1586-ն որոշման համաձայն հանրապետությունում հայտարարվել է ռազմական դրություն:

<u>Այն հանքերը, որտեղից հնարավոր էր ձեռք բերել աշխատանքների կատարման համար նախատեսված քարը /Տաշիր, Ծաթեր, Կառնուտ բնակավայրերի հանքեր/ հրաժարվել են տրամադրել այն, քանի որ ելնելով պատերազմական իրավիճակից հանքերը չեն գործել /որի մասին 2020թ-ի նոյեմբերի 10-ին տեղեկացրել ենք Ձեզ:</u>

Կից ներկայացնում ենք ուղարկված գրության պատճեն/:

Տեխնիկան /տրակտորներ, կռունկներ և այլն/ իջեցվել հանքերից, տրամադրվել են զինկոմիսարիատներին: Բացի այդ աշխ. ղեկ Ժորա Ղազարյանը 27.09.2020թ-ին հայտարարված զորահավաքի շրջանակներում զորահավաքային զորակոչի միջոցով զորակոչվել է զինվորական ծառայության:

<u>Խնդրում ենք. հաշվի առնելով վերը նշվածը և Պայմանագրի 7-րդ բաժնի պայմանները լուծել պայմանագիրը /Պայմանագրով պարտավորություններն ամբողջությանբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը/»:</u>

«Շինարար-97» ՍՊԸ-ին ուղղված 07.04.2021թ. թիվ 08.1/6831 ծանուցմամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Շինարար-97» ՍՊԸ-ի միջև վերականգնողական աշխատանքների ձեռքբերման նպատակով 09.09.2020թ. կնքված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163» գնման պայմանագրի համաձայն աշխատանքները պետք է ավարտվեին 2020 թվականի դեկտեմբերի 1-ին, ինչը չի իրականացվել: Դրանք չեն իրականացվել նաև տրամադրված լրացուցիչ ողջամիտ ժամկետներում:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը միակողմանի լուծում է Ձեզ հետ 09.09.2020թ. կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/163» գնման պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 07.04.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

«Շինարար-97» ՍՊԸ-ն ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ պատերազմական իրավիճակից ելնելով հանքերը չեն գործել, ծանր տեխնիկան /տրակտորներ, կռունկներ և այլն/ իջեցվել են հանքերից, իսկ բեռնատար

ավտոմեքենաները տրամադրվել են զինկոմիսարիատներին և վկայակոչել է Պայմանագրի 7-րդ կետը:

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ ***Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել***: ***Այդպիսի իրավիճակներ են*** երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ***ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը***, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, ***որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:***

Այսպիսով՝ Պայմանագրի 7-րդ կետի ուժով գտնում եմ, որ Ընկերության՝ վերը շարադրված հանգամանքերում դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, ***քանի որ «Շինարար-97» ՍՊԸ-ն նման պայմաններում, այն է՝ Պայմանագիրը կնքելուց հետո ծագած անհաղթահարելի ուժի՝ ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու, որի ազդեցությունը շարունակվել է 3 (երեք) ամսից ավելի, օբյեկտիվորեն իր կամքից անկախ պատճառներով զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելու հնարավորությունից:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.04.2021թ. թիվ 26/26-1/5686-2021 գրությամբ «Շինարար-97» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**